

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԱՐՎԱՆ

Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը պատվո նախագահությունում

Սույն թվականի մայիսի 23—24 օրերին Ռումին Պատրիարքության նախաձեռնությամբ Բուխարեստում տեղի ունեցավ Ռումինիայի կրոնական դավանանքների ներկայացուցիչների համաժողով՝ նվիրված Խաղաղության համաշխարհային տարվան:

Հայ Եկեղեցու անունից պատվո նախագահության մաս էր կազմում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի թեմակալ առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը:

Երկօրյա համաժողովի ընթացքում խոսք առան ավելի քան 40 կրոնական ներկայացուցիչներ, որոնք անդրադարձան և շեշտեցին խաղաղության անհրաժեշտությունը ժողովուրդների կյանքի և հառաջդիմության համար:

Վերջում բոլոր մասնակիցների անունից կոչ ուղղվեց Միացյալ Ազգերի Կազմակերպությանը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին և եկեղեցական այլ կազմակերպությունների:

ԹՂԹԱԿԻՑ